

**Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանի ելույթը
հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային
հանձնաժողովի նիստին**

Հարգելի գործընկերներ.

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Տավուշի մարզային հանձնաժողովը /ստեղծվել է ՀՀ Տավուշի մարզպետի 20.03.2008թ. թիվ 9-Ա կարգադրությամբ, փոփոխություն և լրացում է կատարվել 26.08.2010թ. թիվ 48-Ա կարգադրությամբ/ 2013թ. ընթացքում անց է կացրել 5 նիստ: Քննարկվել են բազմաբնույթ հարցեր, նիստերին հրավիրվել և մասնակցել են հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող բազմաթիվ ՀԿ-ների, պետական ու ոչ պետական կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանների աշխատակիցներ: Նիստերի արձանագրությունները սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Նիստերի ընթացքում քննարկվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնման պարագաների տրամադրման գործընթացի մասին իրազեկում» /ՀՀ կառավարության 15.07.2010թ. թիվ 88-Ն որոշում/, «Առողջական վիճակի վերականգնման հեռանկարի բացակայության դեպքում առանց եռամսյա դիտարկման ժամկետի պահպանման բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրվող անձանց հիվանդությունների ցանկը հաստատելու մասին», «ԲՄՓՀ գործունեության բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին», «ՀՀ կառավարության 13.09.2013թ. թիվ 36 արձանագրային որոշման «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թվականների ծրագրին հավանություն տալու մասին» հարցերը և այլն: Նիստերի ընթացքում քննարկվել են հատկապես «Հույսի կամուրջ» ՀԿ-ի 4 մասնաճյուղերի և մարզի բոլոր համայնքներում գործող ընտանեկան համայնքային 61 կենտրոնների կողմից կատարված աշխատանքները, որոնք մարզպետարանի և հանձնաժողովի համատեղ, համագործակցված աշխատանքի արդյունք են: Հանձնաժողովի նիստերին քննարկվել են նաև մարզի բոլոր համայնքներում իրականացվող «Առողջ սկիզբ», «Ապրենք միասին» և «Կրթության և արժանապատիվ կյանքի իրավունք» ծրագրերի իրականացման ընթացքին առնչվող հարցեր:

Հանձնաժողովի քննարկումների արդյունքներում մի շարք առաջարկություններ են ներկայացվել ՀՀ ԱՍՀՆ և տարածքային կառավարման նախարարություն: Մասնավորապես, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն է ներկայացվել առաջարկություն «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման

հայեցակարգի իրականացման 2013-2017 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին»» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ /ՀՀ Տավուշի մարզպետի 04.10.2013թ. թիվ 01/14.1/3875-13 գրություն/: Փորձնական ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսված է հանրապետության 2 համայնքներում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար ստեղծել շուրջօրյա խնամքի տուն / որպես այլընտրանք Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի/: Քանի որ մարզում չկա ստացիոնար հոգեբուժական հաստատություն, և հիվանդները հիմնականում ուղեգրվում են հանրապետության տարբեր կլինիկաներ, որն առաջացնում է լրացուցիչ ֆինանսական ծախսեր, առաջարկվել է փորձնական ծրագրի շրջանակներում շուրջօրյա խնամքի տունը ստեղծել Իջևան քաղաքում /առկա է անհրաժեշտ տարածք/:

Հանձնաժողովի նիստերին պարբերաբար մասնակցել են մարզի բոլոր մեծ համայնքների ճարտարապետները, որոնց հետ քննարկվել է ՀՀ կառավարության 2006թ. Թիվ 392-Ն որոշման պահանջների կատարման ընթացքը: Հղում է արվել բոլոր համայնքապետերին՝ տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքները հաշմանդամներին հարմարեցնելու և որոշման պահանջների կատարման ընթացքն ապահովելու վերաբերյալ: Հանձնաժողովի նախաձեռնությամբ հավաքագրվել և մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում ստեղծվել է տեղեկատվական բազա՝ մարզի բոլոր 62 համայնքներում 2006-2013 թվականների ընթացքում կառուցված կամ կառուցվելիք շենք-շինությունների՝ հաշմանդամներին հարմարեցվածության /նաև թեքահարթակների/ վերաբերյալ:

2013թ. հոկտեմբեր ամսին անց է կացվել հանձնաժողովի ընդլայնված նիստ /արձանագրություն թիվ 5/, որին բացի հանձնաժողովի անդամներից հրավիրվել և մասնակցել են մարզում գործող բոլոր ՀԿ-ների ներկայացուցիչներ և համայնքապետարանների աշխատակիցներ, շահագրգիռ պետական և ոչ պետական կառույցների աշխատակիցներ: Հանձնաժողովի նախաձեռնությամբ պատրաստվել է ՀՀ կառավարության և ՀՀ ԱԺ-ի կողմից 2012-2013թ.թ. ընթացքում ընդունված, հաշմանդամների հիմնախնդիրների լուծմանն ուղղված բոլոր իրավական ակտերի փաթեթը, որը ներկայացվել և տրամադրվել է նիստի մասնակիցներին, իսկ դրանց ուղղությամբ տրվել են պարզաբանումներ:

Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվել է „Տավուշ” մարզային թերթում, և Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում:

Շնորհակալություն ուշադրության համար: